Դավիթ Հովհաննիսյան
բ.գ.թ., պրոֆեսոր

«ԻԴԵԱԼԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ» ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐՈՒՄ. ՄՈՒՐՈՒՎԱՅԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋԱՀԻԼԻԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԱԴԱԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Բանալի բառեր՝ ադաբ, արաբամուսուլմանական մշակույթ, ումմա, սուննա, մարգարե

Սույն հոդվածի հիմնական խնդիրն է պարզաբանել սուննայի հիմքում ընկած «իդեալական մարդ»[1] հասկացության իմաստային փոփոխությունները նախաիսլամական շրջանից մինչև ադաբի ձևավորման ժամանակաշրջանը (9-րդ դ.):

Միջնադարյան արաբամուսուլմանական մշակութային կոդի ձևավորման տեսակետից ադաբի հետ կապված հասկացությունների շրջանակի կազմավորման գործընթացի ուսումնասիրությունը բացառիկ նշանակություն ունի, քանի որ այդ հիմնահարցային դաշտի և այն արտահայտող գրականության ձևավորումը պետք է ումմայի առաջընթացի տեսանկյունից երկու սկզբունքային գործնական կարևորություն ունեցող հարցեր ձևակերպեր և լուծեր: Առաջին խնդիրը կապված էր աշխարհիկ դաստիարակության և կիրթ մարդ ձևավորելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների, այսինքն՝ վարվելակերպի ընդհանուր շրջանակը որոշելու և այն մատուցելու եղանակների ճշգրտման հետ: Ինչպես նշում էր ալ-Ջահիզը (775-868), այդ առումով ադաբը «հանդիսանում էր բարոյական դաստիարակություն կամ էլ ավանդության փոխանցում»: Այլ կերպ ասած, պետք է ամ-

[1] Մուհամմադ մարգարեի կյանքը, նրա գործն ու խոսքը, այն ընկալումը, որ նա «լավագույնն է մարդկանցից» հիմք են ծառայում օրինակելի վարքագծի կաղապարի ձևավորման համար:

բագրվեր ումմայի յուրաքանչյուր անդամի համար հասկանալի չարի և բարու, թույլատրելիի և արգելվածի, գովելիի և պախարակելիի, լավի և վատի հստակ պատկերացում, տրվեր գնահատականների սանդղակ, այլ կերպ ձևակերպելով՝ տեքստային հստակ սահմանում ստանար իսլամից բխող արժեքային համակարգը: Ընդ որում, այն ունեցավ երկու հիմնական դրսևորում՝

ա. էթիկա՝ ումմայի ամբողջականության համար,

բ. բարոյականություն՝ ումմայի յուրաքանչյուր անդամի համար:

Հարցի արմատական լինելը բխում էր այն հսկայական փոփոխություններից և հեղափոխական շրջադարձերից, որոնց մեջ ումման ներգրավվեց արաբական արշավանքների հաջողության արդյունքում: Նախ՝ ումմայի գաղափարական, քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոնը շատ արագ դուրս բերվեց Հիջազից, սկզբում՝ Սիրիա, ապա՝ Իրաք: Մեքքան և Մադինան պահպանեցին միայն իրենց ծիսական դերը. կրոնական սկզբունքների նոր իրավիճակին ադապտացնելու, ուսմունքի հետագա մշակման և զարգացման կենտրոնները նույնպես ձևավորվեցին Արաբիայից դուրս գտնվող նոր նվաճված արաբականացվող և իսլամացվող քաղաքներում:

Քաղաքների դերը այդ փոփոխություններում հսկայական էր: Արաբական թերակղզուց դուրս եկած ցեղերը բնակություն էին հաստատում կամ քաղաքներում, կամ էլ քաղաքների և ավանների մոտ ճամբարներ էին ստեղծում, որոնք սկզբնական շրջանում սպասարկվում էին այդ քաղաքների և ավանների բնակիչների կողմից, իսկ հետագայում՝ ինչպես բնակչության աճի, այնպես էլ բնակիչների իսլամացման հետևանքով ճամբարները և քաղաքները միավորվում էին, դառնում մեկ ընդհանրություն: Քաղաքի կյանքը, քաղաքային ընդհանուր դրվածքը, վարք ու բարքը սկզբունքորեն տարբերվում էր այն ապրելակերպից, որին սովոր էին թերակղզու

բնակիչները: Արաբական միջնադարյան աղբյուրները պահպանել են բազմաթիվ պատմություններ, որոնք վկայում են այն զարմանքի և շլացման մասին, որոնք բաժին ընկան ոչ միայն նախկին քոչվորներին, այլ նաև նվաճված քաղաքների բնիկներին:

Բացի նոր նիստուկացից և սովորականից զգալիորեն տարբերվող առօրեական կյանքից, արաբները ներգրավվեցին մի շարք խորքային գործընթացների մեջ. սրընթաց ֆեոդալականացում, որն իր որոշիչ ազդեցությունն ունեցավ այդ շրջանի իսլամի վրա՝ որոշակիորեն փոփոխությունների ենթարկելով վերջինիս հատուկ ումմայի անդամների հավասարության սկզբունքը և ստեղծելով նոր տիպի տնտեսական հարաբերություններ, որոնք պահանջում էին գրեթե ամբողջականորեն տարբերվող կրոնական և մշակութային կողմնորոշիչներ:

Ներգրավվելով իրենց ավանդականից սկզբունքորեն տարբերվող քաղաքակրթական համակարգի մեջ՝ արաբները ստիպված եղան մի շարք նորույթներ՝ պետություն, վարչարարություն, կառավարման համակարգ և այս ամենից բխող նոր կառույցներ և նորմեր ստեղծել: Վերը թվարկվածին հարկ է ավելացնել նաև այն հանգամանքը, որ քաղաքների նոր բնակիչները՝ որպես ուղղահավատ մուսուլմաններ և խիզախ քոչվորներ, սեփական գերազանցությունը տեղաբնակների նկատմամբ մշտապես հաստատելով և պնդելով, այնուամենայնիվ, արագորեն՝ շնորհիվ ստրկուհիների հսկայական քանակության և իսլամի բազմակնության և հարճեր պահելու օրինականության սկզբունքի, բազմաթիվ զավակներ էին ունենում, որոնց մայրերն օրորոցայիններ և հեքիաթներ էին երգում և պատմում իրենց մայրենի լեզվով և խաբարայինից, այսինքն՝ ինֆորմացիայի բանավոր փոխանցման եղանակից տարբերվող տեքստային տրամաբանությամբ, ինչը նշանակում էր արդեն բոլորովին նոր մշակութային կոդով և քաղաքակրթական նորմերով դաստիարակված սերնդի ձևավորում:

Սա այն կարևոր գործընթացն է, որն անընդհատ շարունակվում էր և, ցավոք, մնացել է հետազոտողների ուշադրությունից դուրս: Նոր որակի և բովանդակության տեքստերի շրջանառության մեջ մտնելը իր առաջին արտացոլումն է ստանում Աբդալլահ իբն ալ-Մուկաֆայի և նրա սերնդակիցների ստեղծագործություններում, որոնց հիմնական նպատակն էր բոլորովին նոր սինկրետիկ մշակութային կոդի և քաղաքակրթական նորմերի ձևավորումը: Այլ կերպ ասած, եթե արաբականացումը և իսլամացումը նոր մուսուլմաններին տվեց ‘իլմ («աստվածային գիտելիք», այսինքն՝ նոր արժեհամակարգ և մշակութային կոդ), ապա վերջիններս, իրենց հերթին, ներմուծեցին ադաբը («քաղաքակրթական նորմեր և ինստիտուտներ»[2]), որն անհրաժեշտ էր Արաբական թերակղզուց եկածներին նոր ապրելակերպին ադապտացնելու համար:

Կարևոր է այս ամենը հաշվի առնելով, այնուամենայնիվ, չթերագնահատել ցեղի ավանդություններին, իսլամի նորմերին, մուրուվայի սկզբունքներին և քոչվորական աշխարհայեցողությանը հավատարմություն սերմանող տոհմացեղային հասարակությանը հատուկ կրթադաստիարակչական համակարգի դերը այս նոր սերունդների ձևավորման հարցում: Անհրաժեշտ է այստեղ կրկին ընդգծել «ֆարիս» և իսլամի առաջին հավատարիմ մարտիկներ լինելու գիտակցությունը, որը նրանց գրավված երկրների բնակչության, այդ թվում՝ նաև իսլամացած բնակչության նկատմամբ գերազանցության զգացում էր պարգևում: Բացի այդ, չէ՞ որ Ղուրանը Ալլահի կողմից արաբերեն էր տրվել:

Այս անհավասարությունը նոր և հին մուսուլմանների միջև հետագայում հիմք է դառնում շու’ուբիայի հզոր շարժման ստեղծման համար, բայց կարևորն այն էր, որ վերը

---

[2] Ժան Մոնեի ձևակերպումն է: Տե՛ս Monnet J., Memoirs, Trans. by Richard Mayne, Doubleday & Company, 1978, p.213.

նշված պատճառներով հենց ինքը արաբական հասարակությունը, մշակույթը, սկզբունքներն ու մոտեցումները աստիճանաբար փոփոխության են ենթարկվում՝ նոր քաղաքակրթական համակարգին համահունչ լինելու նպատակով: Ձևավորվում է արաբամուսուլմանական մշակութային համակարգը, որն իր հզոր ազդեցությունն ունեցավ ամբողջ աշխարհի վրա:

Պետական կառավարման մեջ ընդգրկված նոր մուսուլմանների դերի և ազդեցության աճը դարձավ կարևորագույն գործոն այդ նոր մշակութային համակարգի ստեղծման գործընթացում: Իրենց քաղաքակրթական հմտությունները, կառավարման դարավոր փորձը և ժառանգած հնագույն մշակութային ավանդությունները պահպանած, սակայն իսլամն ընդունած և արաբացած քաթիբների դասը դարձավ այս ձևավորվող հասարակության նոր սերուցքը, որը հին քոչվորական մուրուվան նոր մուրուվայով փոխարինելու հեղափոխական գործընթացն էր իրականացնում: Պատահական չէ, որ նույն Աբդալլահ իբն ալ-Մուկաֆան «ահլաս-սուննա», այսինքն՝ սուննայով ուղղորդվող համայնք (կամ՝ մարդիկ) ձևակերպմանը ավելացնում է ֆադլ (արժանապատվություն, առաքինություն) և մուրուվա եզրերը: «Ահլաս-սուննաուա-լ-ֆադլուա-լ-մուրուվա»՝ սուննայով ուղղորդվող համայնքը առաքինի է և առաջնորդվում է մուրուվայից բխող իդեալականան ձի կերպարին համապատասխանելու գաղափարով:

Ավելի մանրամասն անդրադառնանք «մուրուվա» հասկացությանը, որի վերլուծությունը հնարավորություն կտա ոչ միայն պարզաբանել այս եզրի մեջ թաքնված իմաստի կարևորությունը այդ դարաշրջանի արաբական պատմամշակութային գիտակցության համար, այլև թույլ կտա փորձել հասկանալ ավանդության մեխանիզմի աշխատանքը այն հասարակության մեջ, որը տոհմացեղայինից անցում է կատարում ավելի բարդ կառուցվածք ունեցող և զարգացած քաղաքակրթական համակարգ:

Թվում է, թե տվյալ դարաշրջանի մշակույթի կողմից նախորդ պատմական փուլերից ժառանգած ամենաարժեքավոր և նշանակալից տարրերը, ինքնըստինքյան, երաշխավորում են ավանդության առաջընթաց շարժումը, ինչպես նաև, նույն այդ շարժումը ավանդության ներսում: Սակայն անմիջապես հարց է առաջանում, թե ինչպե՞ս է տվյալ ավանդությունից դուրս ստեղծված արժեքը ներգրավվում մեկ այլ մշակութային համակարգի մեջ, ի՞նչ փոփոխություններ է այն կրում: Բացի այդ, ի՞նչ իմաստային լիցք ունեն տվյալ փոփոխվող համակարգի մեջ ստեղծվող նոր արժեքները: Մյուս կողմից, նման կերպ վերափոխված համակարգի մեջ ինչպե՞ս են տեղավորվում նախորդ դարաշրջաններից պահպանված արժեքները:

Բնական է ենթադրել, որ այդ բոլոր նոր իմաստներն իրենց համար նոր հանդիսացող մշակութային ունիվերսումում վերաիմաստավորվում են և ադապտացվում նոր արժեքային իրողությանը: Նման վերաիմաստավորում տեղի ունեցավ նաև արաբական նախաիսլամական պատմամշակութային աշխարհընկալման համար առանցքային հասկացություններից մեկի՝ մուրուվայի հետ: «Մուրուվա» եզրի իմաստը մեկնաբանվում է որպես իդեալական հեծյալ մարտիկ քոչվորին հատուկ որակների համագումար, որի մեջ ներառվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են խիզախությունը, առատաձեռնությունը, հյուրընկալությունը, բանաստեղծական տաղանդը, ավանդությունների և ավանդապատումների իմացությունը, մարտական արվեստներին տիրապետելը, իր ցեղին նվիրվածությունը, անձնուրացությունը և այլն: Ֆարիս («հեծյալ», երբեմն թարգմանում են նաև «ասպետ») բեդուինը, որը համապատասխանում է մուրուվայի պահանջներին, այն իդեալական կերպարն է, որին պետք է ձգտի նմանվել յուրաքանչյուր բեդուին:

Արդեն 8-րդ դարում հսկայական հեղինակություն ունեցող ալ-‘Ասմային ասում էր, որ շի’րը (բանաստեղծություն) խոսքով զգեստավորված մուրավվա է, և բանաստեղծական ար-

վեստի անկումն ու վերելքը պայմանավորված են մուրավվայի դրսևորման մակարդակով: Այստեղից եզրակացություն՝ մուրուվան ընկալվում է որպես տոհմացեղային ավանդական հասարակության ոգու էություն: Ըստ Բ. Ֆարեսի, նախահիսլամական շրջանում մուրուվան ընդամենը մի քանի պարտադիր պահանջ էր պարունակում. օգնություն և օժանդակություն հարևանին, օթևան և ապահովություն տրամադրել անտուն փախստականին, հետևել արյան վրեժի կանոններին, լինել առատաձեռն և խիզախ[3]: Ժ. Լեկոնտը, հիմնվելով հիմնականում Իբն Կութայբայի ստեղծագործությունների հետազոտության նյութերի վրա, շատ ավելի մանրամասն է ձևակերպում մուրուվայի կանոնները, այնքան մանրամասն, որ իր իսկ ձևակերպմամբ, «շատ դժվար է այդ բազմաթիվ տարրերի հիման վրա մի ընդհանրական բնութագրում ձևավորել այս հասկացության վերաբերյալ»[4]: Այսինքն, IX դարի կեսերին, երբ Իբն Կութայբան գրում էր մուրուվայի իր ընկալման մասին, այս եզրի բովանդակությունը արդեն կորցրել էր իր հստակությունը: Փոխարենը ձևավորվում է մուրուվայի մեկ այլ ընկալում, որն իր էությամբ համապատասխանում է ոչ միայն իսլամի ոգուն, այլ նաև նոր սոցիալ-մշակութային իրողություններին, որոնց ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցան հիմնականում իրանական քաղաքակրթականավանդության կրողները:

Նշված ձևափոխումների հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած է այն ընկալումը, որ մուրուվայի կարևորությունը արաբական ցեղերի համար ուներ սկզբունքային նշանակություն, ուստի այն հնարավոր չէր ուղղակի մերժել կամ բացառել, առավել ևս այն դեպքում, երբ նման արժանիքների կոդեքսի գոյությունը էական էր նաև նոր մուսուլմանա-

---

[3] Տե՛ս Lecomte G., Ibn Qutaiba: l'homme, son oeuvre, ses idees. Damas, 1965, pp. 475-476.

[4] Նույն տեղում, էջ 470-471:

կան հասարակության համար: Բայց թողնել այն նույն բովանդակությամբ, որը բխում էր արդեն իսկ մերժված և քննադատված իրողություններից, անհնար էր, ուստի հին նշանակությանը պետք է նոր իմաստ տրվեր և դրանով իսկ ադապտացվեր նոր իրողության պահանջներին:

Եզրի վերաիմաստավորումը և վերջինիս ադապտացումը նոր մուսուլմանական արժեքային համակարգին սկսվում է Մուհամմադ մարգարեի քարոզչական գործունեության հետ մեկտեղ, սակայն այդ մասին մենք շատ քիչ վկայություններ ունենք: Արդեն մուսուլմանների հաջորդ սերունդները բերում են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ այս կամ այն իրավիճակում մարգարեն ասել է, որ հավատացյալը ամեն ինչում պետք է համապատասխանի մուրուվայի պահանջներին՝ սկսած հագուստից, խոսելու ձևից մինչև ընդունած որոշումները և գործած արարքները:

Ինչպես արդեն նշվել է, այս հասկացությանը հաճախ և տարբեր առիթներով անդրադարձել է Իբն ալ-Մուկաֆան: Օրինակ, իր «Մեծ ադաբի գրքի» «Տիրակալի ադաբի մասին» գլխում նա գրում է. «Իմացի՛ր, որ քո արժանապատվությունը քո յուրաքանչյուր քաղաքի, ավանի և ցեղի կրոնի և մուրուվայի մարդկանց մեջ է: Թո՛ղ լինեն նրանք քո եղբայրները, բարեկամները, մտերիմները, մերձավոր մարդիկ, հավատարիմ ընտրյալները և մերձավորները»[5]:

«Անկեղծ խորհուրդի նկատմամբ համբերատարության մասին» գլխում գրում է. «Համբերությամբ զինվի՛ր անկեղծ խորհուրդ տվողներից նրանց խոսքին, ով հակաճառում է քեզ, կումերով խմի՛ր նրանց դառը բառերը և կշտամբանքները, սակայն թույլ մի՛ տուր այդ ճանապարհը ուրիշ ոչ մեկին, բացի բանականության և մուրուվայի մարդկանցից, որպեսզի դրանից չխրախուսվի ստորը և չոգևորվի նզովյալը»[6]:

---

[5] Abdalla ibn al-Mukaffa, Kitab al-Adab al-Kabir, al-Kahira, 1984, p. 16.

[6] Նույն տեղում, էջ 19:

«Զգուշացում տիրակալի ընկեր (ընտրելու) մասին» գլխում գրում է. «Եթե կարող ես քեզ ընկեր դարձնել նրանց, ում ճանաչել ես որպես առողջ մուրուվայի, իսկական կրոնի և բարեբեր գործողությունների տեր մինչև քո տիրակալ դառնալը, ապա այդպես էլ վարվիր: Իրոք որ, տիրակալը մարդկանց մասին իմացություն չունի բացի նրանից, ինչ գիտեր մինչև իր իշխանության գալը»[7]:

Մեջբերումները կարելի է շարունակել, Իբն ալ-Մուկաֆայի մոտ դրանք շատ են, ինչը վկայում է այն բացառիկ կարևորության մասին, որը հեղինակը տալիս է այս եզրի իմաստի ձևակերպմանը: Սակայն արդեն իսկ բերված հատվածներից պարզ է դառնում, որ իր կողմից մուրուվայի հասկացության սահմանումը բոլորովին տարբեր է այն ըմբռնումներից, որոնք կային ընդհուպ մինչև VIII դ. սկիզբը: Նույնիսկ այս մի քանի օրինակներից ակնհայտ է դառնում, որ Իբն ալ-Մուկաֆայի «Արժանապատվության, սուննայի և մուրուվայի տեր» անձնավորությունը լրջորեն տարբերվում է ջահիլիական ֆարիսից, որին ուղղակի հակացուցված էր զուսպ և համբերատար լինել: Հակառակը, «աստվածային ցասումը», անզուսպ և չկշռադատված խիզախությունը, երբ հերոսը չի մտածում հետևանքների մասին, այդ իդեալական կերպարի անքակտելի մասն են կազմում: Մյուս կողմից, չնայած Իբն ալ-Մուկաֆան օգտագործում է «սուննա» եզրը, սակայն նա իր ստեղծագործություններում գրեթե չի անդրադառնում հադիսներին, այսինքն՝ հղում չի կատարում ումմայի տեսակետից միակ հեղինակավոր աղբյուրի վրա: Հասկանալի է, որ իսլամական ավանդության պահապանները պետք է իրենց մոտեցումը ևս դրսևորեին այս կարևոր հարցի վերաբերյալ, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իբն ալ-Մուկաֆան մահապատժի ենթարկվեց իր գաղտնի զրադաշտական լինելու համար:

---

[7] Նույն տեղում, էջ 26:

Առաջին հադիսագիտական ստեղծագործությունը «Մուսանաֆը», որտեղ կա «Ադաբի գիրք» բաժինը, պատկանում է Աբու Բաքր իբն Աբի Շայբայի (մահացել է 849 թ.) գրչին: Այստեղ մենք տեսնում ենք թե՛ ադաբի, և թե՛ մուրուվայի նկատմամբ ընդգծված ավանդական վերաբերմունք: Մուրուվան այն է, ինչ արել է, ինչպես վարվել է, արտահայտվել է, ողջունել է, քնել է, արթնացել է ... մարգարեն: Մորուքը ma'ruf (ողջունելի, խրախուսելի) պահել է այնպես, ինչպես պահել է մարգարեն: Մարգարեն նախընտրել է այսինչ տեսակի ոտնամաններ, այսինքն՝ դա ma'ruf է:

Արդեն այն, թե ինչպիսի մանրակրկիտ ձևով է Իբն Աբի Շայբան վերակառուցում մարգարեի՝ որպես իդեալական կերպարի դիմագիծը, ցույց է տալիս Աբդալլահ իբն ալ-Մուկաֆայի հսկայական ազդեցությունը իր ժամանակակիցների և հաջորդ սերունդների վրա, որն, ավանդապահների տեսակետից պետք է կանխվեր և սահմանափակվեր:

Մեկ դար հետո ալ-Ջահիզը գրում է իր հայտնի «Քիթաբալ-բուխալա» ստեղծագործությունը, որը հեգնանքի է ենթարկում արդեն կայացած քաղաքային բարքերը, որոնք չեն համապատասխանում հին մուրուվային՝ հյուրասիրությանը, առատաձեռնությանը, անձնվիրությանը և այլն: Նա արձանագրում է այն բարոյական իրավիճակը, որի ձևավորումը կապում է հիմնականում պարսիկների ազդեցության աճի հետ և որի դեմ էր ուղղված Իբնալ-Մուկաֆայի քարոզված կաղապարը, որն ընդգրկում էր ումմայի ընդհանրական էթիկան և ումմայի յուրաքանչյուր անդամի անձնական բարոյականությունը:

Հսկայական նոր աշխարհը, որը բացվեց (ֆաթահա, այստեղից՝ ֆաթհ եզրը, որը միջնադարյան արաբ հեղինակները կիրառում էին վաղ շրջանի արաբական նվաճումների համար) արաբների առջև իր ողջ լեզուների, բարքերի, մշակույթների, մարդկային տեսակների բազմազանությամբ, չէր կա-

րող իր որոշիչ ազդեցությունը չունենալ նաև իդեալական մարդու մասին պատկերացումների վրա:

Այս վեճը շարունակվում է և IX դ. արդեն ալ-Ջահիզի և Իբն Կութայբայի միջև՝ ներառելով ադաբի սահմանների և բովանդակության սկզբունքային հարցերը[8]:

В ПОИСКАХ «ИДЕАЛЬНОГО ЧЕЛОВЕКА»: РАЗВИТИЕ КОНЦЕПЦИИ «МУРУВВА» НАЧИНАЯ С ДЖАХИЛИЙСКОГО ПЕРИОДА ДО ПЕРИОДА ФОРМИРОВАНИЕ АДАБА

Давид Оганесян

(резюме)

В данной статье предпринята попытка проанализировать процесс трансформации смысла и значения одного из существеннейших доисламских понятий - муруввы на базе анализа творчества некоторых авторов 8-9 вв. В статье показывается, как с изменением цивилизационной системы и культурного кода, среды и представлений о мире и жизни меняется также представление об идеальном человеке (а таковым, с точки зрения уммы, являлся пророк Мухаммад) как образце для подражания. Ибн ал-Мукаффа в своих произведениях конструирует свое видение «идеального правителя», «идеального члена уммы», что приводит к обращению некоторых факихов указанного периода, в частности, автора Мусаннафа Ибн Аби Шайба к данной тематике.

---

[8] Այս մասին տե՛ս Оганесян Д., «Книга поэзии и поэтов» Ибн Кутайбы, Ереван, 1986:

IN THE SEARCH OF THE "PERFECT MAN": THE DEVELOPMENT OF THE CONCEPT OF MURUWWA FROM THE JĀHILIYYA TO THE FORMATION OF ADAB

Davit Hovhannisyan

(summary)

The article attempts to analyse the transformation and the meaning of one of the main pre-Islamic concepts - the concept of muruwwa - based on the analysis of works of some authors of the 8th and the 9th centuries. This article shows how the changes of civilizational and cultural code, environment and ideas about the world and life influenced and changed the idea about the “perfect man” (such as Prophet Muhammad in terms of umma) as a role model. In his works Ibn al-Muqaffa' builds his vision about the“perfect ruler”, “perfect member of umma”, which leads to addressing to some jurists of the above mentioned period, in particular, to the author of Musannaf, Ibn Abi Shayba to this topic.